

Եզեքաւոր՝

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Հայաստանի բազկամարտի
Ֆեդերացիայի նախագահ
Ա. Գարոնեյան



2019 թ.

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 7-ՐԴ ԱՄԱՌԱՅԻՆ ՄԱՐԶԱԿԱՆ
ԽԱՂԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ԲԱԶԿԱՄԱՐՏԻ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ
ԿԱՆԱՆՑ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ

I. ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Համահայկական մարզական խաղերի ծրագրով բազկամարտի առաջնության մրցումները կազմակերպվում և ղեկավարվում են Համահայկական ամառային 7-րդ խաղերի կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի և Հայաստանի բազկամարտի ֆեդերացիայի կողմից:

II. ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

2. Համահայկական մարզական խաղերի ծրագրով բազկամարտի 2019 թվականի առաջնության մրցումներն անցկացվելու են «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի և երիտասարդության պալատ» ՊՈԱԿ-ի դահլիճում: Հասցեն՝ քաղաք Ստեփանակերտ, Թումանյան 59:

06.08.2019 թ. (ժամը 09.00-ից) - կշեռք (տղամարդիկ և կանայք).

07.08.2019 թ. (ժամը 09.00-ից) - տղամարդկանց և կանանց առաջնություն (ձախ և աջ ձեռքեր) բոլոր քաշային կարգերում:

III. ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3. Բազկամարտի առաջնությունն անցկացվելու է համաձայն գործող միջազգային կանոնակարգի:

4. Առաջնության քաշային կարգերն են՝ տղամարդիկ, աջ և ձախ ձեռքերով, 70 կգ, 90 կգ և +90 կգ:

5. Կանանց առաջնության քաշային կարգերն են՝ աջ և ձախ ձեռքերով, 70 կգ և +70 կգ:

6. Մարզիկները մրցումներին ներկայանում են մարզահագուստով:

7. Առաջնությանը մասնակցելու իրավունք ունեն 18 տարեկանը լրացած և ավելի բարձր տարիքի տղաներն ու աղջիկները: Միջազգային կարգի սպորտի վարպետները իրավունք չունեն մասնակցելու մրցումներին:

8. Խաղերին մասնակցող յուրաքանչյուր քաղաք իրավունք ունի ներկայացնելու ոչ ավել, քան երկու մասնակից յուրաքանչյուր քաշային կարգում:

IV. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

9. Համահայկական մարզական խաղերի ծրագրով բազկամարտի մրցումների հաղթողները և մրցանակակիրները կպարգևատրվեն մեդալներով և դիպլոմներով: Պարգևատրման արարողությունը տեղի կունենա մրցումների ավարտից անմիջապես հետո:

Բազկամարտի ֆեդերացիայի նախագահ՝ Արսեն Գաբրիելյան (հեռախոս՝ 091-197-105),

Գլխավոր միրավար՝ Սուրեն Պռազյան (հեռախոս՝ 094-800-977),

Բազկամարտի ֆեդերացիայի նախագահի տեղակալ՝ Կարապետ Աղաջանյան (հեռախոս՝ 094-100-878)